# ՄԱՐԳԱՐԷ
# ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ

## ԵՐԿՆԻՑ

Խուճ վաստակ երկոց

ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏ ՀԱՄԻՄՅԱՆ

Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐ ԱՐՔԱՅԵԱՆ

1866 — ԳՅԱԼԷ

ՄԱՐԳԱՐԻՏ

# ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ

ԵՐԿՆԻՑ

Կ. ՊՕԼԻՍ — ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ
Ուղղակի Ղարեի փողոց Շերիֆ-Փաշա խան թիւ 13

2(875)
Ա-7
6296

# ՄԱՐԳԱՐԻՏ
# ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ

## ԵՐԿՆԻՑ

Խուճ վանական երկոց

ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՐԻՄԵԱՆ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍՈՅ

## ՏԵԱՌՆ ՊՕՂՈՍԻ

ԱՌԱՔԵԼԱՊԱՏԵՏՈՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹԻՒՆՔԻ ԵՎ ԾԻՐԻ
ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1866—ՌՅԺԵ

Նման է *Արքայութիւն երկնից* առն վաճառականի, որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս։ Եւ գտեալ մի պատուական մարգարիտ, երթեալ վաճառեաց զամենայն զոր ինչ ունէր, եւ գնեաց զայն մարգարիտ։

Աւետ. Մատթ. Գլ. ԺԳ. Հմ. 45

ԱՌ

# ԲԱՐԴԱԴԱՁԵԱԼ ԾԱՌԱԴԻՂԻ

# ՕՏԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԻ

## ՈՒՂԵՐՁ

Ընդունեցէք սրտի հաճութեամբ սոյն լրոշուած տառիս փոքրիկ մատաքձան. Մարմարոնեայ ծանր քար չէ սա, միայն հողապատ գերեզմանին վրայ անշարժ կեցած տխուր և լռին փառք. այլ խօսուն Աւետարան է, որ ընդհանուր աշխարհի ծագ իւր ձայն կը հնչէ: Այն տիրասէր կնոջ աշխարհաքարոզ յիշատակին հետ, որ ազնիւ իւղով օծեց Քրիստոսի գլուխ, Թող յիշուի նաև

Ձեր առաքինի հանգուցեալ Հօր Պօղոս Ղազի Օտեան պանծալի անուն, զոր երախտապարտ սրտով այս վերտառութեամբ կը պատկէ ի գլուխ Մատենիս Եժդեհ Վարդապետ Հայաստանցի։

# ՆԱԽԱՃԱՒԻՂ

Որն՞ է այն մատեան, որ առաւել մարդոյ սրտին հետ կը խօսի քան Թէ մտաց. ով է այն մատեանին արագագիր դպիր, որուն լեզուէն ու շրթունքներէն շնորհք և սէր կը բղխի, իր խօսքեր բոլոր աշխարհ կը գրաւէ, և մարդոյ հոգին վարելով ի գերագոյն սէր՝ երկրէս երկինք կը հանէ. ինչ է այն մեղմախօս բարբառ, որ Հրէաստանի խորէն տիեզերաց չորս կողմ հասաւ. ինչ զօրաւոր լեզու էր այն, որ ընտրեալ յիմարներուն բերնով՝ աշխարհիս իմաստնոց միտքեր յաղթահարեց ու նուաճեց: Աւետարանն է այս յաւիտենական կենաց բան, զոր Յիսուս քարոզեց կտակ Թողուց աշխարհի ու գնաց. Սուրբ Հոգին յիշեցոյց, Աւետարանիչներն գրեցին:

Աւետարան Յիսուսի շունչն է, որով չէ Թէ միայն Բաբիլոնի դաշտի մէջ ցրուած

Հրէական ազգին չորցած ոսկորներ կենդանացոյց. այլ համատարած աշխարհիս երես սրուած կենդանուոյն մեռած ընդհանուր մարդկութեան հոգիներն ի նոր կեանքս վերանորոգեց:

Ինչ որ Աւետարան գործեց, կարող չէր ոչ ոք գործել հին և արդի աշխարհին մէջ՝ ոչ իշխանութեանց զէնք, ոչ իմաստասիրաց գիտք: Աւետարանին փառք բարձրացաւ տիրեց աշխարհիս վրայ քանի մի տկար ձկնորսներու ձեռքով. Աւետարանին փառաւոր գահ Բեթլեհէմի մսուր և աղքատներու խրճիթներ եղան:

Զիկայ բնաւ գիրք մի կամ մարդկային հանճար և իմաստութիւն, որ կարողանայ մարդոց սառնակ հոգին ուղղել, դատարակել և բարուրել, միշտ ի չարն արձանացած՝ ի բարին վերածել, բայց միայն՝ Աւետարանն: Այս փոքրիկ հրաշագիր մատեան աշխարհ կարդաց ու հասկցաւ. այս մանրիկ մանանեխի սերմէն ծառ մի բու-

սաւ , որուն ապաստանարար ծիւղերուն վրայ աշխարհիս վաստակեալ մարդիկ Թռչունի պէս նստան ու հանգիստ առին :

Թիսուս իւր Աւետարանին պատուական մարգարիտ Հրէաստանի հրապարակին մէջ ի վաճառ հանեց , աղքատն և հարուստն վազեցին ի գնել . մարգարտին տէր ձրի կը բաշխէր , ոչ ինչ չէր պահանջէր , այլ միայն հաւատք . ով որ կը հաւատար , նա միայն կստանար մարգարիտն :

Աւետարանին մարգարիտ յիմարներու սրտին մէջ հաւատք է , իմաստնոց մտքին մէջ անհերքելի ճշմարտութիւն . մէկն առանց քննելոյ կը հաւատայ , միւսն Տէրարթի պէս քննել ուզելով՝ կափշի և կը սրանչանայ .

Աւետարանին կերպարը անմահարար է , կաթէն աւելի անուշիչ , մեղրէն աւելի քաղցր է . Դաւիթ ճաշակեց զայն հոգւով և անուշութենէն զմայլելով կասէր « Որպէս՝

զի քաղցր են ի քիմս իմ բանք քո, քան զմեղրը բերանոյ իմոյ: »

Այս ամենահամ սիրոյ ճաշակ Յիսուս բերաւ երկինքէն Գողգոթայի խաչի փենջակին մէջ նորաճաշակ մանանայ մի կազմեց, Աւետարանին Սուրբ օրէնքներն, կարմիր արիւնով դրոշմեց. զոր չի կարացին եղծել և ոչ նշանախեց մի աշխարհիս բռնաւորութեանց ձեռք: Ինչ՞ կարողացան շինել Պղատոն, Արիստոտել, Սոկրատ իրենց իմաստասիրութեան փենջակին մէջ: Յիսուս միայն շինեց կրօնի Սուրբ մեղր. որով քաղցրացաւ հանուր մարդկութեան բերան, որ դառնացած էր Ադամայ ճաշակած պտղով:

Աւետարան Աստուածորդւոյն երեսաց արտափայլող լոյսն է. եկեղեցին մութ է, եթէ սորա լուսով չի լուսաւորի. եկեղեցին կը խոտորի, եթէ սորա լոյս չառաջնորդէ. եկեղեցին հաստատուն չէ, եթէ սորա Սուրբ բարերով չը հիմնուի:

Հայաստանեայց եկեղեցւոյ մեր երանելի

նախնիք որչափ երկիրգածութեամբ պաշտեր են Աւետարան, յորոց ոմանք մեկնութեանց պարապելով՝ Աւետարանին գիտութիւն ժողովրդոց ընտելացուցեր են: Եթէ ապացոյց կուզես՝ գնա շրջիր Հայաստանի վանորէից, քաղաքաց և գիւղերու մէջ, ուր կը տեսնաս բիւրաւոր գրչագիր Աւետարաններ և նոցա մեկնութիւնք մագաղաթներու վրայ վայելուչ ծաղկենկարներով գրուած: Եւ այսօր իսկ եկեղեցւոյն մէջ ամէն ընթերցուածներէն առաւել Աւետարան կը պաշտուի. վասն զի ժողովրդոց խնկելի գիրք Աւետարանն է, զոր կը համբուրէ յաճախ ամենայն ջերմեռանդութեամբ. թէ հիւանդանայ Աւետարանին կը դիմէ, թէ գլուխ ցաւի նորա տակ կը դնէ, թէ հաւատայ կատարելապէս իւր ցաւեր կը փարատին: Աւետարանին հրաշալիք մեծ է, միայն մարմնոյ ախտեր չի բժշկեր, այլ առաւել ևս հոգւոյն ախտեր կապաքինէ:

Եւ տրուպս, որ իբրև վարդապետ և

մասամբարար պաշտօնական կոչուած եմ Աշնարանի սեղանոյն, աւասիկ նոյն ամենայի անապատ սեղանէն դոյգն մի ճաշակ պատրաստեցի Միօնի որդւոց համար: Մատթէոսի Աշնարանչին հինգերրորդ, վեցերրորդ և եօթներրորդ գլխոց վրայ մեր մտաց չափաւորութեամբ խորհրդածելով դիւրաձեռն յօրինեցի այս փոքր Մատեանիկ: Այն նպատակաւ որոշեցի միայն այս երեք գլուխ վասն, զի տոցա մէջ կը պարունակին գրեթէ մեծ մասամբ Աշնարանի ճշմարտութեան բարոյական և փրկաւէտ օրէնքներն, ուր Մովսիսին օրինաց թերութիւններն Յիսուս կատարեալ գերազանցաց կատարելութեամբ:

Աշնարանին երեք գլխոց իսկական բընագիրն խորհրդով նախակարգեցի մեր խորհրդածութեանց սկիզբն, որով թերևս լուսոյն շնորհիւ՝ լուսաւորի մեր ստուերագիր խորհրդածութեանց պատկերն: Փոքրաջան աշխատութիւնս ուրիշ նպատակ մի

չունի, ուշիմ ընթերցող, բայց միայն Աստուածաշունչ Սուրբ օրինաց գիրքը դրոշմել մեր սրտին մէջ. և միանգամայն հաստատել մեր արդի աստուածեան վարք Յիսուսի քարոզած սիրոյ սրտաբուխ հետ, ու ճանչնալ փորձով թէ ստոյգ Աստուածաշունչն հարազատ որդիքներ կոչուելու արժանի եմք, եթէ իբրև խորթ և օտար մերժուած եմք մեր երկնաւոր հօր որդեգրութենէն, որում արժանի կացոյց զմեզ Սուրբ հոգւոյն վերածնութեան շնորհք:

Առէք ընդունեցէք ուրեմն, ով եկեղեցւոյ մօր հոգեծին մանկունք, Յիսուսէն աւանդեալ արքայութեան սոյն մարգարիտ, զոր իբրև փոքրիկ մանեակ մի յօրինելով ձեզ կը նուիրեմ:

Սողոմոնի ձայն կը յորդորէ զձեզ, որ այս մանեակ ձեր պարանոցէն կախէք. որպէս իմաստուն վաճառական ամէն բան վաճառելով, միայն Յիսուսի մարգարիտն ստացէք, որուն հետ բնաւ հաւասարութիւն

չունին բոլոր աշխարհիս Քաղաւորութեան գանձեր։ Ինչ՞ գին կը խնդրէ հապա այս մարգարտին տէր, ուրիշ ոչինչ, սիրտ միայն։ Տուր ուրեմն, քո սիրտ, որդեակ, ինչպէս կը խրատէ Իմաստունն, և անա կատանաս մարգարիտն։

Եւ իրեւ զասցէ , (զիսուսնայցն) ցՏէ զնա ի վերայ
ուսոց իւրոց խնդալով. Ղուկ. ԺԵ. 5 հատոր.

# ՄԱՐԳԱՐԻՏ

# ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ

## ԵՐԿՆԻՑ



A 6296

Ցիսուսի վարդապետութիւն ի վերայ լերինն Գալիլեացւոց. յորում բովանդակին Աւետարանին շնորհաց եւ ճշմարտութեան օրէնք. Մատթէոսի Աւետարանչին ի հինգերորդ գլխէն սկսեալ մինչեւ ցեօթներորդ գլխոյն վերջ:

### ԳԼՈՒԽ Ե.

Եւ տեսեալ (Ցիսուսի) զժողովուրդսն՝ ելի ի լեառն. և իբրև նստաւ անդ՝ մատեան առ նա աշակերտքն նորա. և բացեալ զբերան իւր ուսուցանէր զնոսա, և ասէր.

Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից.

ՀԱՅԿ ԳԱՅԿԱՆԻ ՏԱՆ - ԷՄՓ
ՄԱՏԵՆԱՐԱՆ
ՋՄԵՆԱՐԱՆ

Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին։

Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր։

Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին։

Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն։

Երանի այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն։

Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին։

Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից։

Երանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն, և ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ՝ վասն իմ. ցնծացէք և տրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս. զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յառաջ քան զձեզ էին։

Դուք էք աղ երկրի. ապա թէ աղն անհամի՝ ի՞նչ յաղիցի. ոչ խիւք ազդիցէ այնո-

հետեւ, քայց եթէ ընկենուլ արուարքս՝ և կրեան լինել ի մարդկանէ։

Վաւ քէք լոյս աշխարհի։ ոչ կարէ քաղաք թաքչել՝ որ ի վերայ լերին կայցէ. և ոչ լուցանեն ճրագ՝ և դնեն ընդ գրուանաւ, այլ ի վերայ աշտանակի։ և լոյս տայ ամենեցուն՝ որ ի տանն իցեն. այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկանն, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է։

Մի համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս։ ոչ եկի լուծանել՝ այլ լնուլ։

Ամէն ասեմ ձեզ՝ մինչև անցցեն երկինք և երկիր, յոտն մի՝ որ նշանախեց մի է, ոչ անցցէ յօրէնսէն և ի մարգարէից՝ մինչև ամենայն եղիցի։

Որ որ լուծցէ մի ինչ ի պատուիրանաց յայսցանէ ի փոքունց, և ուսուցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութեանն երկնից։

Սակ որ արասցէ և ուսուցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեանն երկնից։

Բայց ասեմ ձեզ, զի եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի քան զդպրացն և զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից։

Լուարուք զի ասացաւ առաջնոցն, թէ մի սպանաներ. զի որ սպանանիցէ՝ պարտական լիցի դատաստանի։

Այլ ես ասեմ ձեզ, եթէ ամենայն որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց՝ պարտաւոր լիցի դատաստանի. և որ ասիցէ ցեղբայր իւր յիմար՝ պարտաւոր լիցի ատենի. և որ ասիցէ ցեղբայր իւր մորոս, պարտաւոր լիցի ի գեհենն հրոյն։

Եթէ մատուցանիցես զպատարագ քո ի վերայ սեղանոյ, և անդ յիշեսցես՝ եթէ եղբայր քո ունիցի ինչ խէթ զքէն, թող զպատարագն քո առաջի սեղանոյն, և երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում, և ապա եկեալ մատուսցիր զպատարագն քո։

Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն մինչդեռ իցես ընդ նմա ի ճանապարհի. գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորին, և դատաւորն դահճի. և արկանիցիս ի բանտ։

Ամէն ասեմ քեզ, ոչ երանիցես անտի՝ մինչև հատուցանիցես զյետին նաքարակիսն։

Լուարուք զի ասացաւ՝ մի՛ շնար. բայց ես ասեմ ձեզ, թէ ամենայն որ հայի ի կին մարդ առ ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա ի սրտի իւրում։

Եթէ ակն քո աջ գայթակղեցուցանէ զքեզ, խլեա զնա և ընկեա ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, և մի՛ ամենայն մարմինդ քո անկանիցի ի գեհեն։

Եւ եթէ աջ ձեռն քո գայթակղեցուցանէ զքեզ, հատ զնա և ընկեա ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, և մի՛ ամենայն մարմինդ քո արկանիցի ի գեհեն։

Ապա քէն ասացաւ, թէ որ արձակիցէ զկին իւր՝ տացէ նմա զարձակմանն։

Բայց ես ասեմ ձեզ, եթէ ամենայն որ արձակէ զկին իւր առանց բանի պոռնկութեան, նա տայ նմա շնալ, և որ զարձակեալն առնէ՝ շնայ։

Դարձեալ լուարուք զի ասացաւ առաջ-

նոցն, մի երդնուցուս տուս, բայց հաստատեսցես Տեառն զերդմունս քո։

Այլ ես ասեմ ձեզ՝ ամենևին մի՛ երդնուլ, մի՛ յերկինս՝ զի աթոռ է Աստուծոյ, և մի՛ յերկիր՝ զի պատառանոցն է ոտից նորա, և մի՛ յԵրուսաղէմ՝ զի քաղաք է մեծի արքայի. և մի՛ ի գլուխ քո երդնուցուս, զի ոչ կարես մազ մի սպիտակ առնել կամ թուխ։

Այլ եղիցի ձեր բան, այո՝ այո, և ոչ՝ ոչ. զի առելին քան զայս ի չարէն է։

Լուարուք զի ասացաւ, ակն ընդ ական, և ատամն ընդ ատամն։

Այլ ես ասեմ ձեզ, մի՛ կալ հակառակ չարին։

Այլ եթէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո՝ դարձո նմա և զմիւսն։

Եւ որ կամիցի ոք դատել և առնուլ քզշապիկս քո, թող ի նա և զդրահիսն քո։

Եւ որ ստիպարկանէ զքեզ մղոն մի, երթ ընդ նմա և երկուս։ որում խնդրէ ի քէն՝ տուր, և որ կամի փոխս առնուլ ի քէն՝ մի՛ դարձուցաներ զերեսս։

Լուարուք ապարքէն զի ասացաւ, սիրեացես զընկեր քո, և ատեացես զթշնամին քո։

Այլ ես ասեմ ձեզ, սիրեցէք զթշնամիս ձեր, օրհնեցէք զանէծիչս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց, և աղօթս ի վերայ այնոցիկ՝ որ լլկենն զձեզ և հալածեն. զի եղիջիք որդիք հօր ձերոյ որ յերկինսն է. զի զարեգակն իւր ծագէ ի վերայ չարաց և բարեաց, և ածէ անձրև ի վերայ արդարոց և մեղաւորաց։

Զի եթէ սիրիցէք զայնոսիկ որ սիրենն զձեզ՝ զինչ վարձք իցեն. ոչ ապարքէն և մաքսաւորք զնոյն գործեն. և եթէ ասայցէք միայն ողջոյն բարեկամաց ձերոց՝ զինչ առելի առնէք. ոչ ապարքէն մաքսաւորք և մեղաւորք զնոյն գործեն։

Արդ եղերուք դուք կատարեալք. որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է։

## ԳԼՈՒԽ Զ.

Զգոյշ լերուք ողորմութեան ձերում՝ մի՝ առնել առաջի մարդկան, որպէս թէ իցայց ինչ նոցա. զուցէ և վարձս ոչ ընդունի-

ցիք ի հօրէն ձերմէ՝ որ յերկինսն է.

Այլ յորժամ առնիցես ողորմութիւն, մի՛ հարկանիր փող առաջի քո, որպէս կեղծաւորքն առնեն ի ժողովուրդս և ի հրապարակս, որպէս զի փառաւորեսցին ի մարդկանէ։

Ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա։

Այլ զոր յորժամ ողորմութիւն առնիցես, մի՛ գիտասցէ ձախ քո զինչ գործէ աջ քո։ որպէս զի եղիցի ողորմութիւնն քո ի ծածուկ, և Հայրն քո որ տեսանէ ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս։

Եւ յորժամ յաղօթս կայցես, մի՛ լինիցիս որպէս կեղծաւորքն. զի սիրեն ի ժողովուրդս և յանկիւնս հրապարակաց կալ յաղօթս, որպէս զի երևեսցին մարդկանէ։

Ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա։

Այլ զոր յորժամ կայցես յաղօթս, մուտ ի սենեակ քո՝ և փակեա զդուռս քո, և կաց յաղօթս առ Հայր քո ի ծածուկ. և Հայրն քո որ տեսանէ ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտնապէս։

Եւ յորժամ կայցէք յաղօթս, մի՛ շատա-

խօսք լինիք իրրև զնեքեանսան. զի համարին թէ ի բազում խօսից իւրեանց լսելի լինիցին. արդ մի՛ նմանիցէք նոցա. զի գիտէ հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ, մինչչև ձեր խնդրեալ ինչ իցէ ի նմանէ։

Եւ արդ այսպէս կացէք դուք յաղօթս. Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր, և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց, և մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէն, զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեան ամէն։

Զի եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ և ձեզ հայրն ձեր երկնաւոր։

Եթէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ոչ հայրն ձեր թողցէ զյանցանս ձեր։

Եւ յորժամ պահիցէք՝ մի՛ լինիք իրրև զկեղծաւորսն տրտմեալք, որ ապականեն

զերեսաբերանց, որպէս զի երևեսցին մարդկան թէ պահիցեն։

Ամէն ասեմ ձեզ, ոչն իսկ են վարձք նոցա։

Այլ դու, յորժամ պահիցես, օծ զգլուխ քո և լուա զերեսս քո, զի մի՛ երևեսցիս մարդկան իբրև զպահող, այլ Հօրն քում ի ծածուկ։ և Հայրն քո որ տեսանէ ի ծածուկ, հատուսցէ քեզ։

Մի՛ գանձէք ձեզ գանձս յերկրի, ուր ցեց և ժանգ ապականեն, և ուր գողք ական հատանեն և գողանան։

Այլ գանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց և ոչ ժանգ ապականեն, և ոչ գողք ական հատանեն և գողանան։ զի ուր գանձք ձեր են, անդ և սիրտք ձեր եղիցին։

Ճրագ մարմնոյ ակն է։ եթէ ակն քո առատ է, ամենայն մարմին քո լուսաւոր եղիցի։ ապա թէ ակն քո չար է՝ ամենայն մարմին քո խաւարին եղիցի։

Իսկ ասդ՝ եթէ լոյսդ որ ի քեզ է՝ խաւար է, խաւարն որչափ ևս։

Ոչ ոք կարէ երկուց տէրանց ծառայել։ կամ զմին ատիցէ և զմիսն սիրիցէ, կամ

զմին մեծարեցէք և զմիւսն արհամարհեցէք. ոչ կարէք Աստուծոյ ծառայել և Մամոնայի։

Վասն այսորիկ ասեմ ձեզ. մի՛ հոգայք փոքր ոգւոց ձերոց՝ զինչ ուտիցէք կամ զինչ ըմպիցէք, և մի՛ փոքր մարմնոց ձերոց՝ թէ զինչ ագանիցիք. ոչ ապարքէն ոգի առաւել է քան զկերակուր՝ և մարմին քան զհանդերձ։

Հայեցարուք ի թռչունս երկնից՝ զի ոչ փարեն և ոչ հնձեն, և ոչ ժողովեն ի շտեմարանս, և հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնոսա. ոչ ապարքէն դուք առաւել էք քան զնոսա։

Իսկ արդ ո՞ ի ձէնջ առ հոգայ իւրում՝ յաւելուլ կարիցէ ի հասակ իւր կանգուն մի։

Եւ փոքր հանդերձի զի՞ հոգայք. հայեցարուք ի շուշանսն փայլենի՝ որպէս աճեն. ոչ գործեն և ոչ նիւթեն. ասեմ ձեզ՝ զի և ոչ Սաղոմոն յամենայն ի փառսն իւրում զգեցաւ իրրև զմի ի նոցանէ։

Իսկ եթէ զխոտն ի փայրի, որ այսաւր է և վաղիւ ի հնոց արկանի, Աստուած այն-

պէս զգեցուցանէ, ոչչափ ես առաւել զձեզ, թերահաւատք։

Մի՛ այսուհետև հոգայցէք և ասիցէք. զինչ կերիցուք կամ զինչ արբցուք կամ զինչ զգեցցուք. զի զայդ ամենայն հեթանոսք խնդրեն. քանզի գիտէ հայրն ձեր երկնաւոր՝ թէ պիտոյ է ձեզ այդ ամենայն։

Խնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ և զարդարութիւն նորա, և այդ ամենայն յաւելցի ձեզ։

Մի՛ այսուհետև հոգայցէք վասն վաղուի՝ զի վաղիւն վասն իւր հոգասցի. շատ է աւուրն չարն իւր։

## ԳԼՈՒԽ Է.

Մի՛ դատիք՝ զի մի՝ դատիցիք. զի որով դատաստանաւ դատիք՝ դատիցիք էք, և որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ։

Զի՞ տեսանես զչիչ յական եղբօր քոյ, և ի քում ական զգերանդ ոչ տեսանես. կամ զիա՞րդ ասես ցեղբայր քո, թող հանիցս զչիչդ յականէ քումմէ. և ահաւասիկ ի քում ականդ գերան կայ։

Ագահաւոր, հան նախ զգերանդ յականէ

քումմէ, և ապա հայեցիս հանել զշիրն յականէ եղբօր քոյ։

Մի՛ տայք զսրբութիւն շանց, և մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց, զի մի՛ առ ոտն կոխիցեն զնոսա, և դարձեալ երգիծուցանիցեն զձեզ։

Խնդրեցէք՝ և տայցի ձեզ, հայցեցէք՝ և գտջիք, բախեցէք՝ և բացցի ձեզ։ Զի ամենայն որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ, և որ բախէ՝ բացցի նմա։

Ո՞ իցէ ի ձէնջ մարդ՝ զոր խնդրիցէ որդի իւր հաց, միթէ քա՞ր տայցէ նմա։ և կամ խնդրիցէ ձուկն, միթէ օձ՞ տայցէ նմա։

Արդ եթէ դուք որ չարքդ էք՝ գիտէք պարգևս բարիս տալ որդւոց ձերոց, որչափ ևս առաւել հայրն ձեր որ յերկինս է՝ տացէ բարիս այնոցիկ որ խնդրեն զնա։

Զամենայն զոր միանգամ կամիջիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ՝ այնոքէս և դուք արարէք նոցա։ Զի այս իսկ են օրէնքն և մարգարէքն։

Մտէք ընդ նեղ դուռն։ քանզի ընդարձակ է դուռն և հեշտարձակ ճանապարհն՝ որ

տանի ի կորուստ, և բազումք են որ մառանեն ընդ նա. քանի՞ անձուկ է դուռն և նեղ ճանապարհն՝ որ տանի ի կեանս, և սակաւք են որ գտանեն զնա.

Զգոյշ լերուք ի սուտ մարգարէից՝ որ գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց, և ի ներքոյ են գայլք յափշտակողք. ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա.

Միթէ քաղիցեն ի փշոց խաղող կամ ի տատասկէ թզուզ.

Այսպէս ամենայն ծառ բարի՝ պտուղ բարի առնէ, և ծառ չար՝ պտուղ չար առնէ.

Ոչ՝ կարէ ծառ բարի պտուղ չար առնել, և ոչ ծառ չար՝ պտուղ բարի առնել.

Ամենայն ծառ՝ որոչ առնէ պտուղ բարի, հատանի և ի հուր արկանի.

Ապա ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա.

Ոչ ամենայն որ ասէ ցիս՝ Տէր Տէր. մտցէ յարքայութիւն երկնից. այլ որ առնէ զկամս Հօր իմոյ որ յերկինսն է.

Բազումք ասիցեն ցիս յաւուրն յայնմիկ. Տէր Տէր՝ ոչ յանուն քո մարգարէացաք, և յանուն քո դեւս հանաք, և յանուն քո զո-

բութիւն բազումս արարաք. և յայնժամ ասացից ցնոսա՝ եթէ ոչ երբէք գիտէի զձեզ. ի բաց կացէք յինէն ամենեքեան՝ որք գործէիք զանօրէնութիւն։

Ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ և առնէ զսոսա, նմանեսցէ առն իմաստնոյ՝ որ շինեաց զտուն իւր ի վերայ վիմի. իջին անձրևք՝ և խառնեցին գետք, շնչեցին հողմք՝ և բախեցին զտունն, և ոչ կործանեցաւ, քանզի ի վերայ վիմի հաստատեալ էր։

Եւ ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ՝ և ոչ առնէ զսոսա, նմանեսցէ առն յիմարի, որ շինեաց զտուն իւր ի վերայ աւազոյ. իջին անձրևք, յարեան գետք, շնչեցին հողմք՝ հարին զտունն և անկաւ, և էր կործանումն նորա մեծ յոյժ։

Եւ եղեն իբրև կատարեաց Յիսուս զամենայն զբանս զայսոսիկ, զարմանային ժողովուրդքն ընդ վարդապետութիւն նորա. զի իբրև իշխանութեամբ ուսուցանէր, և ոչ որպէս գրիչքն։

## ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

# Ե. ԳԼԽՈՅՆ ՎՐԱՅ

ՄՈՎՍԷՍ Քորէբ լեռնէն յԵգիպտոս կիջնայ, Յիսուս երկինքէն յաշխարհ. մէկին ձեռք պատուհասի գաւազան կայ, միւսին ձեռք Խաչ և Աւետարան։ Մովսէս՝ որ մարդ էր, իրբև Աստուած Փարաւօնին առաջնարկութեամբ կը խօսի. Յիսուս՝ որ Աստուած էր, Պիղատոսին և Հերովդէսին առեան իրբև խուլ կը լռէ։ Մովսիսին հրովարտակ պատուհասի արիւնով գրոշմուած ողջ Եգիպտոսի անդրանիկներն կը ջարդէ. Յիսուսի Աւետարանին հրովարտակ հանուր աշխարհին ներողութիւն կը բերէ։ Ինչ՞ համեմատութիւն կայ, մէկին մէջ մահ, միւսին մէջ կեանք։ Մովսէս շօշափելի խաւար բերելով Եգիպտացիք անհատնելի գիշերի մէջ անկապ կը կաշկանդէ. Յիսուս ճշմարիտ լուսով բովանդակ աշխարհ կը լուսաւորէ

և խաւարին կապերէն կարձակէ մարդիկ։ Մովսէս կարմիր ծով պատառելով միայն Իսրայէլի ժողովուրդ յազատութիւն կը հանէ. Յիսուս ոչ Հրէայն կը խարէ, ոչ հեթանոս, այլ բոլորմարդիկ խաւարին իշխանութեան գերութենէն կը փրկէ։ Մովսէս կառաջնորդէ զէպ ի Սինայի անջուր անապատ. Յիսուս զէպ ի երկինք. մէկին հոմանութեան մէջ քաղց, ծարաւ, միշտ տրտունջ յուսահատութիւն։ պատժախառն բարերարութիւն, ապերախտութիւն, բարկութիւն Աստուծոյ, բանակին կոտորումն, և այլ բազմագիսի յանցաւորութիւն ժողովրդեան և պատիժ Աստուծոյ. միւսին մէջ կենաց հաց և ջուր, հաւատք, լի յոյս, սէր, խաղաղութիւն, շնորհք, ներողութիւն։ Մովսէս ասանաբանուայ օրինաց տախտակներն բարկութեամբ կը խորտակէ. Յիսուս կը շինէ զայն Աւետարանին հեզութեան արտաքսումն։ Մովսէս անեղրոյ է, հայթայթանաց կրկնուս ժողովոյ խնդրն պատաս խակոյն կը քարկոծէ. Յիսուս շնացեալ կինն ներողութեամբ կարձակէ։ Մովսէս ապերախտ

ժողովրդոց համար ապառամ քարէն ջուր հանելու կը գրանայ. Յիսուս առաւ է, կը կանչէ, որ ծարաւին է եկեցէ առ իս։ Վասնզի Բէսէլիէլին հարուստաբանութեամբ Աստուծոյ խորան կը կանգնէ, Անարատնան քահանայից ձեռքով անբան զոհեր կը մատուցանէ միշտ յանցաւորաց քաւութեան համար. Յիսուս այս խորան Փոզոթային գլուխ կը շինէ, անուն եկեղեցի կը դնէ. Ձոյն ինքն է զոհ և քահանայ միաբնութեանաւոր. ուր միանգամ կը զնանի Աստին վրայ և հանուր աշխարհի փրկութիւն կը գործէ։ Վասնզի ժողովրդոց սակրանքն անապատին մէջ կը թողու, ինքն ևս Նարատնան գլուխ Սեմեանց երկրին կարօտ մնալով կը մնանի. Յիսուս յաղթող Յեսուն է, որ ոչ միայն Նրիքով կը տապալէ՝ այլ խաչարին իշխանի ամրացած բանութիւնները կը խորտակէ։ Վասնզի միայն Հրէական ժողովրդոց Սինային անապատին մէջ երկիրդի և պատմական օրինաց կը գատարակէր. Յիսուս նոյն ժողովրդոց Նրուսաղէմի քաղաքէն, Սողոմ-

նի տաճարէն, գպրաց ու փարիսեցոց նախանձառ չարութենէն որոշելով զէպ ի Գալիլեայի լեռն ու խաղաղ անապատ կը քաշէ։ Փարիսեցոցն թեռն՝ Մովսէսի բարձր սիռոն էր, Յիսուսին նստարան ապառաժ քար էր, տաճարին տեղ՝ գաշտամէջերն էր։

Նոյն օրէնսդիրն Աստուած Սինայի սահուր բարձրութիւնէն կիջնայ մինչև պաղեստինոյ խոնարհ գաշտավայրն, ամպին մէջէն մառախուղով և սոսկալի ձայնով որոտացող անմատչելին Աստուած իրրև ցող մեղմաբար կիջնայ, գետնոյն վրայ խոնարհելով կը նստի. այս տեղ քնտանեաց կը մերձենան իւր մաս. ժողովուրդը, աշակերտը, հրեայ, հեթանոս. իսկ անոր ամ որ մերձենար քարկոծ կը լինէր մարդ և անասուն։ Երբէք նմանութիւն մի չիկայ Սինային և այս գաշտին մէջ. Սինայի լեռ կը ցաւնայ իւր ստուերական Մովսէսի օրինաց, գաշտ կը բարձրանայ մինչև երկինք Յիսուսի նորանշաշ Աւետարանով։ Մովսէսին երես բոզատաս էր, ժողովուրդն անոր կը մերձենար և կը զարմանէր նշմարել երեսին լոյս.

Ցիտուսին երեսս բաց է, իւր եռատգայթ մեզմագոյն է, արեւուն պէս չի խայթիր, իւր մատ կանչէ և կը շրջապատին ամէն մարդիկ որ աշխատած են, որ բեռնաւոր են, որ քաղցած են, որ ծարաւի են։ Լսէ ասելն ով Մովսէս. քոզ իսօսի Ցիտուս. Գալիլեայի գաշտին մէջ քոզ բացուի վիմին ակն. յորմէ կենդանութիւն ջուր յորդելով առաջանէ այն ծարաւցած ու քաղցած մարդկային անապատ. որուն համար Նայիս ասելու կուտար « Ուրախ լեր անապատ ծարաւի։ » Մովսիսական ազգիւր կը ցամաքի, Ցիտուսին կատարանայ։

Երկնաւոր վարդապետն կը բանայ նոր Աստուածաբանի փրկութիւն մատնան, կսկսի մի առ մի առանձել ինն Երանութիւնց գասն։ Երանի կուտայ նոսա հոգւով ազքատներուն. որոց համար երկնք էր ոծեալն Աստուծոյ. « Հոգի Տեառն ի վերայ իմ. վասն որոյ և էօծ իսկ զիս. Աւետարանել ազքատաց առաքեաց զիս. նայեն։ » Ով են հոգւով ազքատներն. նոքա են որ զօրհնապազ կը մարանչին աստուծոյ ամբար-

տատանութիւնն զէմ, որոց սրտին բաղ-
կանութիւնն միայն Աստուած է. աշխարհիս
բոլանդակ մեծութիւնն հոգւով աղքատին
սիրտ կարող չէ լցնել. զի նորա սիրտ
ընչից փարթամութիւնէն բաւական զատուած
է. Ինչ՞ նմանութիւն կայ Ցիսուսի և
աշխարհի տուած երանութեանց մէջ. աշ-
խարհ երանի կուտայ բոլոր փարթամնե-
րուն, որ զօրութեամբ պերճանալով կիշ-
խեն հաստատակ ամրոցից ու բազմութեան
վրայ. Ցիսուսի երանին տարբերնակ է,
նա երանի կուտայ նոցա միայն, որք աշ-
խարհիս փարթամութեան տակ ճնշուած
կը մնան և կը հարատևեն բազմապիսի
զրկանքներով. Ցիսուս իսկ կուտայ աշ-
խարհս փարթամներուն բաժին, հոգւով
աղքատներուն ամենայն կուտայ. իսկ ձեր
ժառանգութիւնն երկնից արքայութիւնն է,
Աստուծոյ երանութիւն փարթամներ չի
զրկեր, այլ նոյն արքայութիւն կը խոստա-
նայ եթէ սրտերին փարթամութեան մէջ
հոգւով աղքատ լինին. Արքունական մեծանա-
ցուս ատացուածոց մէջ հոգւով աղքատէր.

Ցակոբ բազմախատակ ընչից, բարգաւաճեալ որդւոց և թոռանց մէջ՝ հոգւով աղքատ էր, Յովսէփ Եգիպտոսի փառաւոր իշխանութեան մէջ՝ հոգւով աղքատ էր. Մովսէս Աստուածատուր բարձր իշխանութեան մէջ՝ հոգւով աղքատ էր. Դաւիթ թագաւորական աթոռին վրայ հոգւով աղքատ էր. և կը խոստովանէր «Աղքատ և ցաւած եմ ես, Աստուած, փրկութիւն քո ընդունցի զիս։» Հոգւով աղքատութիւն աշխարհս աչքին առաջ արհամարհ կը թուի, այլ երկնից և Աստուծոյ առաջ մեծարոյ և պատուական է։

Ցիսուս երանի կուտայ աշխարհս սգաւորաց. ով էին սգաւորները, անաստուածութեան ստուերին տակ նստող աղքատները էին. խաւարին իշխանութեան տակ կապուած գերիները էին. աշխարհս հրապարակին մէջ անարգուած խեղճերն էին. չաստուածոյ տանջանքներուն առաջ անմրուռնջ կուգ կենդանի զաւակներ զոհող գրժբախտ մայրերն էին։ Ցիսուսի փրկութիւն միայն արքեց սոցա արտասուք ու միխիթա-

ինց գիրքեր. Նային տեսու ու զուշակեց «Տալ ազատության Սիոնի փառս, փոխանակ մոխրոյն օծումն ուրախութիւն»: Ոչ միայն Երուսաղէմին կամ մոխրոյն վրայ նստող Սիոնին որդիք այս երանութիւնն հաղորդ եղան. այլ իսկապէս ժառանգեց այս երանութիւնն հեթանոսական տաճարներուն մէջ զոհագործող մոխրաշունչ ժողովուրդ։ Սիրտ առէք, մի վնասիք, ով դուք, որ երկնից առաջ երջանիկ էք, որ կը ապայք խրատանչիւր ձեր արդի մեծամեծ ազէտներու մէջ. համբերեցէք մինչև խաղաղ. տոգ չի տիրեր յաւիտեան, կանցնի մի վայրկենի մէջ. ձեր տրտմութիւն յաւէրժ ուրախութիւն կը փոխուի։

Ցիսուս երանի կուտայ հեզոց, ով են այս հեզերն. զորս Աստուած ի մարտս կը հանէ աշխարհս բարկութիւն գէմ. ջրհեղեղի դարուն ամբարտաւան հակայից գէմ՝ Նոյ արդար նահապետ. անաստուած ազգաց գէմ՝ աստուածապաշտն Աբրահամ. սպառնացող Նաբին գէմ՝ Յակոբ հեզ. նախանձոտ եղբարց գէմ՝ փոքրիկն Յոսէփ.

Փարաոնին զէմ՝ Մովսէս. Սատանին զէմ՝ Դաւիթ. աշխարհիս իշխանին զէմ իւր միածին Յիսուս. բարբարոս բռնաւորութեանց զէմ՝ Յիսուսի աշակերտներն։

Հեղութիւն Աստուծոյ որդւոց զէնքն է. նոքա տիրեցին աշխարհիս, հեղութիւն երկինք և երկիր միանգամայն ժառանգեց. բարկութեան որդիքներն իրրև հուր շիջան հեղութեան ջուրին առաջ։ Քրիստոնէական վարուց հեղութիւն յաղթանակեց աշխարհս բոլոր զիմագրոց բարկութեանց ամէն խառնութիւն նորա առաջ իւր բնութիւն փոխեց. ասիւծն զգոնացաւ եղին հետ սէր կապեց, գայլն գառն գրգռաւ հօտին հետ ճարակեց։ Այսպէս թագաւորեցին Աստուծոյ հեզ որդիք զոր Դաւիթ նկատեց հոգւով «Այլ որ հեզքն են, նոքա ժառանգեսցեն զերկիր»։

Յիսուս երանի կոչեաց նոցա, որ արդարութեան զէմ քաղցած ու ծարաւի են. ով են սոքա, Աբրահամու հարազատ որդիք, ակնկալող ժողովրդի հեթանոսաց։ Ապա մէն մինչև ի Քրիստոս մեց հազար տարուան

միջոց. նոյն Աղամայ ապերջանիկ սերունդ անասունաձեւութիւնն մէջ ոտիպլոկ եղած երկնից արգարութիւնն կ՚ապառէին։ Արդարութիւն երկնից յանկարծ իջաւ Հրէաստանի դաշտին մէջ այս խօսք Աստուածնից. «Ես եմ հացն կենդանի իջեալ յերկնից»։ Դարձեալ և Նայեցեր միածին Աստուծոյ ոտլով քարցնալ ժողովրդոց կը հրաւիրեն զիրենք ի նոյն արդարութիւնն սեզան, «Ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է տէր, երանելոյ է այր, որ յուսայ ի նա։ Որ ծարաւի իցէք երթայք ի ջուրն այն. կամ կիրշատպինոց վայելեցէք զգարեանն գորա։»

Այլեւ նանդէս Ցիսուսի արդարութիւնն յրամէ է. որ տեղ եղն զինեց, զինին խառնեց, հրաւիրակներն զրկեց անզգամներն կանչեց. էկէք, ով ազգ մարդկան, կերէք այս հաց, խմեցէք ուրախութեամբ այս զինին, զոր պատրաստեցի ձեզ. այսուհետեւ ի բաց թողէք կռամոլութիւնն անզգամութիւն, զիս խնդրեցէք, որ Աստուծոյ խնամութիւն և արդարութիւն եմ, զիս ճաշակեցէք, որ այլ ես չանօթնաք, զիս

խմեցէք, որ այլ ևս չի ծարաւիք։

Զիարա։ Երանի կուսայ ողորմածաց։ Կը վիճակ թէ միայն ողորմածներն կարժանանան փոխադարձ ողորմութիւն գտնելու։ Երկնից հօր մեծագործով որդին գիտութեան արէնք կը հաստատէ իւր եղբարց մէջ, անգիտութիւն կը բառնայ աշխարհիս մեծատանց սրտէն, կը կարճէ գրկանք և յափշտակութիւն մարդասէրի ձեռքէն։ Աշխարհիս փշրանաց կարօտ Հոգարոտներն նոյն սեղանին վրայ բազմելով մեծատանց հետ հաստատապէս կը ճաշակեն։ Փողոցի մուրացիկ աղքատներն Աշուռ ողորմածին սարսուռ հրաւիրելով դարս հետ սեղանէից կը բազմին, հոգւով աղքատն՝ մարմնով աղքատներուն հետ ուրախութեան բաժակներ կը խմէ։ Աշխարհիս հարստներն կը մեղադրեն գիներն, հոգ չէ։ Աշուռին առուն մատենագիրք ողորմած կը գրոշմեն։

Ահա տարաներին գիտութեան ձեռք գերիներուն շղթաներնէկը քակէ, պարտատերց մուրհակներն կը պատռէ, մերկերուն հանգերձ կուսայ, օտարներ իւրեանց կը ժո-

գոմէ, կարօտելոց հաց կը կարկատէ, ծարաւելոց ջուր. մէկ խօսքով ամէն խնդրողին կուտայ, ամէն լացողին արտասուք կը սրբէ. այս գիմուխեան օրէնքը սիրոյ ազբիւրին վտակն է, որ կը բղխի Աստուածանէ ակնէն։

Այս եր՝ամենին ձեզ համար չէ ասու

, ով աշխարհիս անգութ և քարասիրտ փարթամներ. զուր որ միայն Քրիստոնեայ անուն կը կրէք. զուր որ Աստուծոյն և փառք առաւել կը պաշտէք. բաւական է թէ միայն շրջարանէք անուանիին. այլ և անխնայ կը կոխէք զանուագն, ու կը հարստահարէք զանուանին. երկնից արքայութիւն ձեզ յաւուր շարի չպիտի փրկէ, որովհետև զուր ձեր մեծութեան կը յուսայք և ազքատին համար բնաւ չէք խորհիր։ Ով, աշխարհիս հրապարակներուն մէջ մեծատանց գոնեներուն առաջ գոգրոց ազքատներ, տրտունջ մի հանէք, համբերեցէք սիրով, ձեր տեղն Արքահամու գոգն է. իսկ անողորմիցն ի գժոխս։ Զուր ի նոցանէ այսար հաց կը խնդրէք. օր մի պիտի

գայ. յորում նորա սատանիկ ծարաւէն պա-
պակերով ձեզմէ կարի մի ջուր պիտի խըմեր-
լեն. այն ինչ գուբ գրարանին գետնով կը
գոմանաք գուարթի գուարթի։

Ցիսուս երանի կուտայ նոցա, որ սրտով
սուրբ են. նորա միայն կարող են Աստուած
տեսանել։ Աստուծոյ ճշմարտութիւն սրտի
կրօն է, մարմնոյ կրօն չէ. սրտի սրբու-
թիւն ստանալ կը պահանջէ իւր հաստատ-
ցնալ սրդիքներէն. ի բաց կը մերժէ փա-
րիսեցական մաքրութիւններն, երբ սիրտ
զտանելով է անմաքրութեամբ. այսինքն
երբ Աստուծոյ և ընկերին սէր չունի սրտին
մէջ. երբ սիրոյ տեղ նեղ և նախանձ կը
կրէ. երբ պարզութեան տեղ՝ նենգութիւն
և միամտութեան տեղ՝ խորամանկութիւն.
երբ բարութեան տեղ՝ միշտ չարութեան
խորհուրդ կը յղանայ։ Աղտոտի նենգոտ
սիրտեր երբէք ընդունարան չեն Աստու-
ծոյ սուրբ կրօնին. որ պիտի օթեւանին
Ցիսուս և իւր Հայր, եթէ սիրտն սրբու-
թեամբ պատրաստուած չէ։ Մարդոյն սիր-
տն է միայն չարութեան և բարութեան

անօթի. զոր պէտք է սրբենք շարաշար կրից ժանգոտութիւնէն։ Մարդ կարող չէ իւր սիրտ թաղուցանել. վասն զի սիրտն աղբիւրին ներքին ակն է. յորմէ զատն կամ քաղցր միշտ կը բղխին դէպ ի դուրս։ Թէ փափագիս տրեմն զԱստուած տեսանել, ով Քրիստոնեայ, սրտիդ բժշտա աչք սրբէ և Դաւթին բերանով պաղատէ առ Աստուած «Սիրտ տուր հաստատեա յիս Աստուած և հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում։»

Ցիսուս երանի կոչուայ խաղաղարար մարդոց, որք Աստուծոյ որդիք պիտի կոչուին։ Անտարաձնէ միայն խռովեալ աշխարհիս խաղաղութեան գաշնագիր. զոր խաչին և նոր ուխտին արիւնով կը կնքէ Ցիսուս ու կը քարոզէ հանուր տիեզերաց։ Մինչդեռ աշխարհիս տիրապետող բռնութիւններն անդադար մարտ կը մղէին, երկնից թագաւորութիւն յԵրուսաղէմէն սկսեալ հաշտութիւն կը քարոզէ։ Ցիսուս և իւր Առաքեալներն են միայն հօր Աստուծոյ կոչմէն խաղաղութեան պատգամաւորք։ Մովսէս երկու Եբրայեցի երդարց

մեջ մոռացում թ հաշտություն կը հասնիք գիրքեր։ « Արք եղբարք էք, ընդէ՞ր զրկէք զմիմեանս։ » Արտաս Վոզդրիմայի գլուխ խաչի բարձր բեմի վրայ կնցած ընդհանուր աշխարհիս բարեր ազգակրան ազգաց խաղաղություն կատարելէ։ Խաղաղություն Հրէից եւ Հեթանոսաց մեջ, խաղաղություն Աղանիան եւ Հայոց մեջ, խաղաղություն խաղաղասիրաց ազգերու մեջ։ խաղաղություն երկնից եւ տարածին, գետին եւ գայլուն մեջ։ խաղաղություն երկնիցս եւ երկրի մեջ, հրեշտակաց ու մարդկանց մեջ։ Այս խաղաղություն աշխարհս կարող չէր տալ։ ոչ Աղէքսանդրը, ոչ Մեսոպը, ոչ Օգոստոս, ոչ Պերսոս։ Փրկաւոր տուաւ մարդոյ։ տուաւ Հոր Աստուծոյ արդարություն տուաւ ինքն և մարդոյ ճշմարիտ արդարություն ու երանություն։ Ով եկեղեցի՝ Հարություն արդիւ, մեր ամենայնիսկ երգոց Արտասի խաղաղարար արիւնակին Հանգիստ։ Դարձ դարձ եւ բոլոր խաչի սիրելիներս Հաշտություն բերաւ։ Հնա, ինչպէս կը բերուի ասուրն Պաւլոս։ եւ ասաւ իրեն խաղաղարար մեջ-

նորդ խոսքով և անգամակոր նշանագրի կա-
սկիզբ իրարու մեջ, այս տասնգիրքն միանգամ
միայն կարդալ եմք հար Աստուծոյ արժա-
նաւոր արդիք կոչուիր։ Մարգարտարան Աս-
տուծոյ արդի է, մեռ արդի է այն, որ կը
խոսիցուցանէ, որ կը գրգռէ, որ նշ-
նարդ մէջ փոխանակ սիրոյ ատելութիւն
կը սերմանէ, որ թնամութիւնը կը բուժանէ,
որ մարդկայնին միութիւնն կապիր կը դա-
նէ, որ Քրիստոսի նիկոդիմոս յոգնակաց
մարմին մասն մասն կը կտրատէ, յայտ-
նի է թէ այսպիսի խոստարարդ մշակ
սատան հար արդի չէ, այլ խոստարին հար։
Միտս ի նրանէ կատաղ դեղս, որ արդա-
նութիւնն հանար կը հարուածին։ Արդա-
նութիւնն դեղն ինքն է, որ մեր մեղքերոյ ներե-
ցուս։ արդարութիւնն յոյս է, խոստաս ան-
ուանս գինքն և սիրոյ հարուածք։ Հերետիկն
հարուածոյ միջոցն Աղիքսանս, գրքերդ ու գրա-
գիտութիւնդ հարուածոյին միջոցն ի Հոգեգալստի
գրոց։ Մարդն միայն մեռանոյ Աստուծոյ
արդարութիւնն հանար հարուածեցան Ան-
ուանդանի ճշմարտութիւնն բոլոր քարոզիչ-

ներն. և այն ինչ հարածանք կարող չէր կարենալ նոցա ազատ լեզուն՝ մանուսամբ երկրէս բառնալ կուզէին արդարութեան կենդանի վկաներն։ Անթիւ որդիք եկեղեցւոյ տիրոջ նման անմոռնչ ոչխարի պէս աշխարհս ունզգամիներէն ի սպանդ վարեցան։ Այն եկեղեցւոյ կեանք՝ հարածանք է. իւր որդւոց երջանկութիւն՝ չարչարանք։ Աստուածիր սուրբն Պօղոս ալ այսպէս կուսուցանէ. «Որ կամիցին աստուածապաշտութեամբ կեալ ի Քրիստոս Յիսուս՝ ի հարածանս կայցեն։»

Յիսուս ինքնիրարով Նրանին կուզէ առ իւր աշակերտս. որք հանդերձեալ էին նախանի մարգարէից նման, մանաւանդ Յիսուս վարդապետին պէս դէպ ի Գողգոթայի ճանապարհ երթալ. որոց համար նոյն խաչին ծանրագոյն վիշտ պատրաստ կար. կամակար սիրով տանել այն ամէն նախատանաց, զոր թէ ընտանի Իսրայէլի ազգէն և թէ կռապարիշտ հեթանոսներէն անձնանուիրաբար կրել յանձնառու էին։ Ոչ ազատիլ, ոչ վիճել, ոչ ևս տրտունջ

բառնալ տիրոջ հեզութեան նմանելով, թող ապանեն զձեզ, թող թափեն ձեր արիւն գետին, ձեր արեան երաշխաւորն ես եմ, կրակ Ցիսուս, կամիլ մի չի կորուսիր։ Արդար Արէլի օրէն մինչև ի Զաքարիա Աստուծոյ սրբոց ճանապարհն արիւնով բացուած է։ Ձեզմէ յառաջ մարգարէներն նոյն շուրջով գնացին. անուսուցիկ եւ ես կերթամ, ան և զուք աշակերտք իմ, եւ մեռէս էիք։

«Դուք էք աղ երկրի»։ Մարգարէն կեանք Աղամէն մինչև ի Քրիստոս փոսերէր բորբոքին հնութեան եւ ապականութեան մէջ. հոգին անկրօնութեամբ փարակեր էր, մարմին հրեշտակաց ախտով. ամէն անդամներով դրեն մինչև ոտք չարաչար վէրքերով լցուած անխնամ թողուած էր աշխարհս ապրիսին վրայ, ոչ ոք էր ունէր, ոչ օգնական, ոչ բժիշկ ոչ այցելու։ Վասն այսորիկ Դաւիթ բորբ մարգարէն բերնէն ազաղակ կը բառնար իւր անձին ցաւոց համար. «Նեխեցան և փտեցան վէրք իմ յերեսաց անզգամութեան իմոյ»։ Քրիստոս իբրև իմաստուն բժիշկ այս կեանք վերանորոգելու

համար եկաւ. որ անոնց իւր աշակերտներն իրրեւ ազգ կը ցանէ բոլոր աշխարհիս ապա-կանոնաւոր մարդկութեան վրայ. որոց կը պատուիրէ հանդիսանալ իրենց կոչումն առաքելա-կան պաշտօնին մէջ. միշտ առնելով ուսու-ցանել բան թէ սակ բանիս. անհամ չի գտնուիլ կամ հեզգութեան մէջ կամ ոգեւ-որութեան մէջ կամ անբարոյ ընթացքի մէջ։ Եթէ անհամ լինիք ասէ. այնուհետև զուք պիտանի չէք եկեղեցւոյն. զուք յայն-ժամ ինքնին անարգուելով կոխուած կլլինիք ոտից և խաղաս կը կորուսի ձեր ազգին ազ-գեցութիւն։

« Զուք է՛ք լոյս աշխարհի »։ Զիրաս իւր անմոռանալի անուն կը կնքէ իւր աշակեր-տաց վրայ. զի ինքն իսկ է՛ր լոյս աշխարհի.

« Ես լոյս յաշխարհ եկի »։ Այս լուսաւոր արեւ Հրէաստանի հորիզոնէն ծագելով իւր առաքելոցը իրրեւ իւր լուսոյ հաստատութիւն-ներ կը սփռէ հանուր աշխարհին վրայ։ Գնացէ՛ք կրսէ, փարատեցէ՛ք հեթանոսու-թեան խաւարն. զուք ի՛ր աշխարհի լոյսն է՛ք, ի՛ր է՛ք կարելի չէ որ ծածկուիք. բարձր

լեռան վրայ շինուած քաղաք չի թաքչիր։ Նա զձեզ իբրև հրաց վառելով կը դնեմ Աստուծոյ քարոզութեան բարձրագոյն աշտանակին վրայ, զուք պիտի լուսաւորէք բոլոր աշխարհիս տունս։ Զգոյշ եղիք, որ կեղծաւոր գրագէտ ու փարիսեցւոց պէս ձեր հրագի լոյս կուրութեան գրուանին տակ չի թաղուցանէք։ Առանց զձեզ նախ լուսաւորելու՝ զուք կարող չէք ուրիշներ լուսաւորել։ Ձեր առաջնորդութիւն Մովսէսի առաջնորդութենէն մեծ է. նա միայն Հրէական ազգին էր, զուք բոլոր Հեթանոսաց, նորա բանակին առաջ լուսազէն ամպ կը թեռանար, իսկ ձեր լոյս ձեր անձնէն պիտի արտաքսուի։ Ինչ՞ է այս լոյս, վարուց ազգութիւն, անարատ կեանքն, սէր՝ ատելութեան դէմ, համբերութիւն՝ հալածանաց դէմ, ներողութիւն՝ յանցաւորաց դէմ, ճշմարտութիւն՝ ստութեան դէմ, հեզութիւն՝ բարկութեան դէմ, խոնարհութիւն՝ ամբարտաւանութեան դէմ, գրկանք՝ անիրաւութեան դէմ, խաղաղութիւն՝ հակառակութեան դէմ. ի վերջոյ բոլորովին լոյս՝

խաւարին դէմ, պարանոց՝ սուրին դէմ, մարմին՝ կատանայ դէմ, կեանք՝ մահուան դէմ։

Այս է անա ձեր առաքելութեան յուսաւոր վարք. զոր պէտք է անանց աշխարհս ու փառաւորէ ձեր հայր, որ երկինքն է։

Ողբալ պէտք է այս տեղ, ով պաշտօնակից եղբարք, Քրիստոս զմեզ յոյս կանուանէ, մեք տգիտութեամբ խաւար գարձանք. իբրև յոյս և ճրագ Տէր որոշեց զմեզ ուրիշներ լուսաւորելու. մեր աղօտ լուսով նոյն իսկ մեր անձն լուսաւորելու բաւական չեմք։ Քրիստոս զմեզ աղ կը կոչէ, մեք մեր ընդարձակ և կիսամեռ անհամութեամբ անպիտան համարուցանք. շունիմք իրաւունք բազմել թէ ժողովրդն յանգգնութեամբ ասից կոխան առնելով՝ կ՝անպատուէ զմեզ հրապարակներու մէջ. այլ պէտք է ուշադրելով մտարերնք և մեզէն ինքնագատ լինելով վճռենք այս գատաստան, թէ մեր անպատուութիւն՝ մեր տգիտութեան երեսէն է։

Ցիսուս իւր աշակերտաց առաքելութեան

գաներն աւարուելէն զկնի՝ կսկսի նոր պատուիրանաց գաս. որով հին օրինաց թերութիւն կը լեցնէ։ Թերևս կարծիք ունէին Հրեայք և օրինաց գպիրք, թէ Քրիստոս եկեր է հին օրինաց կապեր խզելու քակելու։ Ասոր կըսէ, «Մի համարիք եթէ եկի բաժանել զօրէնս և զմարգարէս եկայն։» Նոյն օրէնսդիրն Աստուած մինչ երբեմն Մովսիսին ձեռքով օրէնքներ կուտար, ինքնին յաշխարհս գալով՝ հին օրինաց արմատին վրայ՝ նոր Աւետարանին ազատ օրինաց ճիւղեր կը պատուաստէ։ Արմատ չի խլեր, այլ առաւել ևս կամրապնդէ Աստուածապիր օրինաց ցանկ. զոր մարդոյն ձեռք երբէք կարող չէ խլուտանել զայն. մինչև անցնին երկինք և երկիր օրինաց կամ մարգարէից տառերէն նշանախաց մի չգիտի եղծուի։ Ով որ համարձակի այս պատուիրաններէն փոքրիկ կարծուած պատուէր մի լուծել զանցառութեամբ և այնպէս ուսուցանել, այնպիսին երկնից արքայութեան մէջ փոքր և անանշան կը համարուի. նա իբր տիրոջ առաք ազնիւ ծա-

ռայ չէ, այլ անհատատարիմ հեղգամիտ մը-
շակ. որ առանձնալ օրինաց տագանդ ամ-
բողջապէս չի գործադրեր։ Այն, մեծ կը գը-
նեմ ձեր անուն երկնից արքայութեան մէջ,
եթէ Աստուծոյ պատուէրներն կատա-
րեալապէս ուսուցանէք։ Եւ ամենայիկ այս
տեղ այժմէն իսկ ձեզ բացատրութեամբ
կիմացնեմ. եթէ ձեր արդարութիւնդ գրաց
ու փարիսեցւոց կեղծեալ արդարութենէն
չի գերազանցի ճշմարտութեամբ՝ դուք կա-
րող չէք երկնից արքայութիւն մտնալ։
Նորա Աստուծոյ անխառն սուրբ օրինաց
հետ՝ ձերոց առանձնութիւն խառնելով կու-
ուցանեն. դուք պարտիք զայն ամենայն
ճշմարտութեամբ հաստատեալապէս ուսու-
ցանել, ոչ յաւելու ոչ հատանել։

Ցիսուս իւր Աստուծոյ տապարով շա-
րութիւն արմատէն կը կտրէ. Մովսէս կը
պատուիրէ չապրանանել. Ցիսուս գեհենի կը-
տակին պարտաւոր կը դատի զայն, որ ի
դուր տեղ իւր եղբօր վրայ կը բարկանայ.
ձեռք յանցեալ կապանանէ երբ մարդոյն
սիրտ կը զայրանայ չի ցասմամբ։ Այս նոր

պատուիրան կապանաց չի բարկանալ. որպէս զի ձեռք կարձի սպանութիւնէն և սուր պատնէշն չի հանէ։

Յիսուս այնչափ կը մեծարէ սիրոյ և հաշտութեան օրէնքը։ մինչև թողուլ կը պատուիրէ սեղանին պատարագ և նուէր, երթալ նախ հաշտութիւն և սէր կապել այն եղբօր հետ. որ խէթ ինչ կամ կասկած ունի իւր մտքին մէջ թէ իրաւ թէ ունիրաւ, կարծելով թէ եղբայր զրկեր է զինքն կամ ոև իցէ պատճառով մի վիրաւորեր է նորա սիրտ։ Ասոր Աստուածային սիրոյ օրէնքը պարտաւոր կը կացուցանէ զմեզ, եթէ զբրկեր ենք եղբայր՝ վերանենք նորա փոխադարձ. իսկ եթէ ոչ՝ փարատենք իւր կասկած խօսելով հանելով զարձեալ շինել ու կցել զինքն ի սէր եղբայրութեան։ Եթէ այսպէս, զուր կաշխատիս ուրեմն սեղանին առաջ երթալ և զԱստուած ի հաշտութիւն ողորմել պատարագով, եթէ չի հոգաս նախ խռոված եղբարդ հետ հաշտել։

Առանց այս պայմանին ոչ խունկ, ոչ

մոմի ոչ նուէրք, ոչ պատարագ, ոչ ապաքէն, բնդունելի չեն Աստուծոյ առաջ։

Զիարա, որ հանդիսական աշխարհիս ունեցած պատարագն է, որչափ խնամով կատարեսցուն, միշտ կենդանի հանապարհին վրայ կամիք՝ մեր սուրբ բնկերին հետ խրատաբար լինիմք։ Ներողութեան օրէնքին չատ մի երթաք, որ երկու երգարդ անհաշտ մնալով՝ պատարագ անարգաբար առնելն մեղմանալ զի երկուքէն որ մէկ պատարագաւոր՝ նորա հանար կազէիրդի երկնաւոր հոր սիրտ. քանզի իւր արդին է և Զիարան երգրայր։ Ամ մեծ է անկանիլ ի ձեռս Աստուծոյ կրակ, ասէրն Պաղաս. հանդիսական պատարագն առնուն՝ արդարաբար անար մի է, Սաղոմոնի պատասանին պէս խոսքդն մեջ տեղն կը կարի երանեալն. մարդկացին առնուն կազարի կաշառով, երկնից առնուն ոչ երթիք. զիարա զի Արդար է Տէր, և զարդարութիւն սիրի. և զուղղութիւն տեսանին երեսք նորա։

Վասիրեան օրէնքն շատ իմաստ կը հանարի յայնժամ միայն՝ երբ մարդ իրօք կը շնանայ.

Գիտուն գերազանց օրէնք նոյն շնորհիւն սրանաս սրանէն կը կարէ։ ասաց կրսէ, Ով որ ցանկանայս հանար ի կրն մարդ հոգի, նա իւր սրտին մէջ կը շնանայ շարժիւն խորհրդով։ Այն, որչափ մեծ է Աստուածն այս զգուշութիւն սրատէր։ Աչք սրտին Աստուածն է, որ կզրօսնու միշտ աշխարհս ստորիցից վրայ, բնական հանկամիտութիւնքն և մարդոյս զգայարանաց մէջ ամէնէն գերազանցն է։ Սրտի ցանկութիւնն միշտ մարդին տակ թաղուած գազանի հար մի է, աչաց հայեցուածքն է, որ գայն կը վառէ և կը բորբոքէ ի վատութիւն։ Ճշմարիտ է այս, Սուրբ Գիրք բազմապիսի արիւնակներ կը հանէ մեր առաջ։ Գրեթէն ծառն, որ գեղցիկ էր և հանոյ աչաց հայելոյ՝ մեր նախամայրն հրապուրեց ի պատուիրանազանցութիւն։ Անթոյ ցեղն Աստուծոյ որդիքնեն՝ Կայենի գաղերք տեսնելով չմոռնցին, այլ ի նոցանէ իրենց ամուսին ընտրելով՝ Աստուծոյ որդիքնեն մարդեցան որդոց մարդկան հետ, մինչև հանգաշխարհնակաղջրնեն զեզ

ազգից զիրենք առ հասարակ ի կորուստ։ Վասիլ մինչեւ իւր պատմութեան մասինքին վրայ կը ճեմէր՝ աչքին գրաւանք դարձաւ ի Թերատէն։ յորմէ հետեւեցաւ կատարեալ շնութիւն և անառակ ձեւն արկից այն անեզ անբարգարութեան, որուն համար գթրնաւոր լսող իւր մանիկ կը խրչէր։ Կը խոզուտ յիշել տեղս Ճակոմբին գաւառ Վինա, Ճոմէի գեղեցիկ, Ճուդիթ և Շուշան։ որք առ հասարակ աչքին թակարթեամ բռնուեցան, ու բմբռնեցին։ Ոմ՝ կարող է աչքի գայթակղութիւնէն ազատ մնալ։ Նա միայն, որ Աստուծոյ երկիւղ, Ցիսուսի սէր, խաչին երախտիք յաճախ կրկնոյ սրտին մէջ՝ միշտ յաղթիս կապաւանի։ «Վիր տէր պահապան բերանոյ իմոյ և գուռն ամուր շրթանց իմոց։ զի մի խոտորեսցի սիրտ իմ բանիս չարութեան։ Տէր գրաւեա աչաց մի տար ինձ և զցանկութիւն դարձի յինէն»։

Ցիսուս այնչափ մեծ ու կարեւոր կը գտաւ մեր սրտէն արմատովի խլել ցանկութեան կիրք, մինչեւ բացարձակ հրաման

կրնէ ի բաց կարել մեր մարմնոյ այն պիտանի անդամներն, որ մեր սրտին ու հոգւոյն գայթակղութեան առիթ կը լինին. այսինքն հանել բուռուռ աչք ու կարել գործակատար ձեռք. բարի ու քու է անաչք և անձեռն մնալ, քան թէ ամբողջ մարմնով գեհենի կրակին մատնուիլ։ Հոգւոյն կեանքն ու բարեմասնութիւնն ամբողջ պահելու համար՝ մարմնոյ հեշտութեան զգայարանքներն զոհել կուտացանէ Աստուած. զի հոգի առաւել է քան զմարմին։ Փոգ այս եթէ աչքիդ շատ պիտանի բան մի ունիս, որուն հակամիտանալ ես մարդկան կիրքերուդ բուռն յօժարութեամբ. թող զայն, կարէ հեռացար քեզմէ երբ գայթակղութեան առիթ է քեզ։ Աշխարհիս ճանապարհի մէջ այս դարանակալ օձի որոգայթէն փախչիլ մեծ արիութիւն է։ Յոսէփ միանչգեռ մատ էր և բռնուած, թող տուաւ իւր հանդերձ. փախաւ ազատեցաւ, մարմին մատնեց բանտին և շղթային, հոգին ազատ մնաց վասիաշ կնոջ հրապուրանաց կապանքէն։ Բայց թէ այս որոգայթէն բացակայ էր բաւա-

կան։ բայց խոյս չի տալով բռնակցու-
տրաց։ Ուրիշ Աստուծոյ պարտիզի որ-
ստրդն գինքն իրրեւ թեռչուն մի նեռանար
պարտէր պատշգամէն վար ձգեց։ Ուրեմն
եթէ մատ եւ՝ խոյս տուր, եթէ ճեռաս եւ՝
մի մոռնար։ աչքդ միշտ զգուշացիր, որ
սրտիդ մէջ վատ կիրքերու տեղի չի տաս։

Աստուած Հրէից խոստացուած թեռան ճա-
նար ուռանանց մերթ թեռան կապ յանկանու-
յիս կարելի տանիման կը գնէ։ ոչխարքն տան-
չի կամ արնամարնեաց կին՝ իւր ոչխարն բա-
ժանելով, ապաշարդանի ոչն է արձակման
թեռի մի տալ մեռը։ Սրուտ ոչ նոր նոր-
բուկան կապ ուերուծանելի կերպով կամրա-
գնով։ Առաուածական վճռով մի գնքով
գոյն։ Զոր Առաուած զուգեաց։ Արդ մի
մեկնեսցէ։ » Առաուած այս պատկ գրութ-
ան մէջ կասկց։ Ազգին բնդունեց գոյն։
ճանչցաս այս մեծ խորհրդոյն գերազանցու-
թիւն և զուրկեց այս նշանաւոր խօսք։
« Զոր զնոյր զնոյր իւր և եկիցի
զնեա գնոց իւրոց և ոչոյն։ » Վասն զի Ադամ
իրրեւ մարդարէ մի զուշակեց թէ նորաս-

ուզի կին՝ իւր մարմնոյ ուսերանքն ան-
նուած կոգմի է՝ ճիշդ նման է թնքան.
որով թնքն և իւր կին մի մարմին կը կազ-
մեն նոքն և Տանուտէր. զիրկոյ բնաւ մարդ-
կայն օրինաց սուր մի, որ կարենոյ ոչն
միացած մարմին ընդ մէջ բաժանել։ Սկսեալ
յին Աստուածն ոչս խօսքը « Առանց
բանի պատնէշ մնան » Հիմն բանի՝ զուն
ուրիշ ներքոգրեալս կարեմք ոչն կին, որ
անհաստատութիւն է սորա ամուսնութեան
պարանոցին մէջ և յարատեւեալս պատնիշ։ Ա-
ստուծոյ ոչս գերագոյն օրէնք անխախտ պա-
հելով՝ ոչ ոք կարող է Սկսեալ Հրամա-
նէն զոր իւր ինքնաշնորհ ամուսնութիւն մի
առնել։ Աստուածոյ Հրէշտակք շատ անգամ
մեր մեր պատճառանքս Տանար կատէն ի-
րենց կիներս ու արհամարհանք զոր կը Տա-
նէին անէն։ Աստուածն ուղղութիւն
կանանց իրաւունք պաշտպանելով՝ պատն-
կու մեր պատճառէն ի զուս ուրիշ պատ-
ճառ մի իրաւունքի չի Տանարիր ամուսնա-
կան կապին պինդ Տանգոյց քակել։ Ասելն
Պօղոս, որ Քրիստոսի Հոգին կը կրէր մեծ

պատկառանօք կը յարգէ տիրող օրէնքը. « Այլ կանամբնացն պատուիրեմ ոչ ես, այլ Տէր, կնոջ յառնէ մի մեկնիլ, ապա թէ մեկնեսցի, անայր մնասցէ, կամ անդրէն ընդ առն իւրում հաշտեսցի և առն զկին իւր մի թողուլ։ »

Հին օրինաց մասնան միայն սուտ երդումն կարգելէ. իսկ նոր Աւետարան երդման խօսքերն իսպառ կը մերժէ և կը հրամայէ ամենեին չերդնուլ ոչ սուտ, ոչ ճշմարիտ, ոչ երկինք որ Աստուծոյ Աթոռն է, ոչ երկիր որ նորա ոտից պատուանդան է, ոչ Երուսաղէմ, որ նորա սուրբ քաղաքն է և ոչ ես իզուր մարդոյ, որ կարող չէ մազմի սուզծել թուխ կամ սպիտակ։ Այլ ձեր խօսքերուն ճշմարտութեան պայման այս միայն բաւական է. այո՝ այո՝ ասել և ոչ՝ ոչ. քան զայս ամէն որոշ խարդախութիւնէն է։ Քրիստոնէական եղբայրութեան մէջ երբէք հարկ չիկայ երդման երբ ընկերական սիրոյ և հաւատարմութեան պայմաններն պահին. որ է խօսքին պարզ կերպարանք չպատրաստել

ընկեր խարերու նպատակաւ. հապա ամէն բանի մէջ անկեղծ խօսիլ ուղիղ և ճշմարիտ պատիւ։ Առաքաւորութիւն հին շարագիւտ հնարքն է, որ ոճին բանաստեղծութեամբ մարդոյն ականջն ապականեց. ոչ որ սուտ կը խօսի, նաւորդի չէ Աստուծոյ ճշմարտութեան. այլ գրութիւն ոճին հետեւող արդանդակն է։ Որչափ թէ թեև է այնպիսեաց առաջ Աստուծոյն այս անաւոր պատուէր. որք աշխարհիս շահամոլութեան մէջ, դատաստանական առնանների մէջ. սովորական խօսակցութեանց մէջ. ոչ եթէ երկինք, գետին, Երուսաղէմ, գլուխ. այլ Ամենակալ Աստուծոյ մեծ անուն միշտ երդմամբ յեղյեղելով կը խօսին և կը խարեն։ Եթէ արարուած բաներուն պատիւ կը պահանջէ Աստուած, որչափ իւր մեծ անուան, որ նոցա արարչապետն է։ Կամ փոխիլ կամ զգուշանալ պէտք է ժամանակիս պատրոյ ու խարուսիկ կեղծաւորներէն. մէկ կերդում, միւս կը հաստատ. ճարտար լեզուն կը կեղծէ, պարզամիտ կը խարուի. սուտ և կեղծաւոր քաղաքավարութիւն մեր ըն-

կերտական կեանք իսպառ խանգարէր է։ Այսպիսի սուտակապատ մարդոցմէն ազատ կենալու համար՝ Աստուծ իր խնդրուածներով առ Աստուած գիմեցէք. «Աղաչեցէ՛ զիս, Տէր, զի նուազեաց սուրբ. նուազեցան ճշմարտութիւնք յորդւոց ի մարդկանէ. Ի նանիր խօսեցան այր ընդ ընկերի իւրում շրթամարք նենգաւորօք սրտէ ի սիրտ խօսեցան»։ Հաստատեցէք ուրեմն միշտ այս ազօթքով. Տէր վրէժխնդիր է, որ մի կը բառնայ երկրէս այն անձն, որ իւր ընկերին հետ նենգաւոր շրթունքներով կը խօսի։

Աստուծոյ օրինաց զատուածներ ասուած անձնատոյ խառնութեամբ պատուհաս կը վիճակ է. Ակն ընդ ական, առամ ընդ առամն, այսինքն է վնասին տեղ պարձնալ վնաս փոխարինել։ Ինչ՞ էր այս օրինաց պարտութիւն, աչքին տեղ աչք, առամին տեղ առամ միշտ վնասներով՝ մարդկային ընկերութիւնը կոյր և առամնաթափ կը կացուցանէր։ Օրինաց խառնութիւն այսպէս մարմին պատժելով՝ հետ գնեան խանգարում կրնէր ոգի մարդկի. պատուհասի երկիւղ թէպէտ

չարութիւն կարենալ կուզէր մարդկային բնութիւնէն. այլ վրէժխնդրութեան հոգին խաղաղ կարող չէր հանել մարդոց սիրտէն։

Ցիսուս Մովսիսին ուէր՝ իւր ծառայէն ուելի հեզ է, այս վրիժառու բարկութեան կրակ կը շիջուցուն նոր պատուիրանագրութեամբ «Այլ ես ասեմ ձեզ մի կայ հակառակ չարին»։ Ով որ աջ երեսիդ ապտակ կը զարնէ՝ ձախն ես դարձուր. ով որ շապիկդ կը հանէ, բաճկոնդ ալ թող տուր, ով որ զքեզ մղոն մի տեղ բռնաբար կը վարէ, դուն երկու մղոն գնայ. ով որ քեզմէ կը խնդրէ տուր, ով որ փոխ առնուլ կուզէ դժկամակութեամբ երեսդ մի դարձուներ։ Այս է ահա Աստուածոյ մշանջենաւոր հաշտութեան սքանչելի օրէնքը, սիրոյ և խաղաղութեան ատուածաշունչ ոգեղն. զոր Քրիստոս միայն երեր յաշխարհ. այն ինչ ինքն իրրև արդար Նոյին դոն գոգդոթային գլուխ գնեուեցաւ՝ իւր կարմիր արեան կաթիլներու ցօղերէն նոր հաշտութեան ոգեղն կամարան յօրինեց

խաչին վրայ. Նոյ միայն չը տեսաւ զայն, այլ բոլոր աշխարհ։

Զարին գէմ հակառակելով՝ կը զայրանայ շարն. Շարին գէմ հնազանդելով՝ կը զիջանի շարն։ Մովսէսին օրէնքն հարկ էր, որ միշտ բարկութիւն ներքինով՝ մարդիկ իրարու գէմ, ի վրէժխնդրութիւն կը վառէր. Յիսուսի օրէնքն ջուր է, որ մարդոց սրտի բարկութեան հրդեհ խաղաղ կը շիջուցանէ։ Ով՝ են այս երկու գերագոյն օրէնսդիրք. մէկին ձեռք սուր՝ երեսէն բարկութեան ոգի կը փոյլատակի. ներել գնաս չի գիտեր, թշնամին և ատելին սա հասարակ կրնայանանէ. միւսին ձեռք խաչ և Աստուծոյն իր ատելին իրրև բարեկամ կը սիրէ և ի սրտէ կը ներէ իր շարանենոց թշնամոյն։ Մովսէս և Յիսուսն են սոքա. մէկն ներզիրտ մարդ է. միւսն երկայնամիտ Աստուած. շատէ այս սեղ մարդոյն և Աստուծոյն գործ, մէկին վճիռ մահ է, միւսին կեանք. Մովսէս ազգասէր է, Յիսուս մարդասէր. Մովսէս մարդկային ընդարձակ սիրոյն պայման կամ թատրոնի միայն Հրէական ազգին վրայ.

ասոր կը պատուիրէ. օտարազգի թշնամին մանա՛ւ չափ առել և ընտանի ազգակից սիրել։ Այսպէս չէ Ցիսուսին պատուէրը, այլ բարձր և գերազոյն. Ցիսուս մարդկային ընկերութեան անդամներուն սիրոյն չափ չի դներ այս կամ այն ազգի վրայ ամիսիերով. հապա ամէն կրնդարձակէ հատատարած մարդկութեան վրայ. և կը հրամայէ առանց խտրութեան սիրել այն ամենայն, որ մարդ է և ընկեր, չրաժանել իրարմէ բնաւ Հրէայն և Հեթանոս։ Աստուածային ուսման մէջ ամէն գաղափարէն բարձրագոյն գաղափար է այս, զոր աշխարհի որդիք կարող չեն ստրկիլ. միայն Աստուածի հատատարիմ աշակերտներ կը ստրկին։ Աւա՛ղ, նոյն իսկ Աստուածի աշակերտաց մէջ խիստ սիրքիկ մնան են այս գաղափարն համար վրդովակ առնողներն։ Մինչդեռ աշխարհ թշնամին կատէ, ո՛վ կարէ սիրել. աշխարհ առերին կը մերժէ, ո՛վ կարէ ընդունել. աշխարհ յիկոզաց և չարչարողաց համար նզովք կը կարդայ, ո՛վ կարէ հարածիչներ օրհնել կամ առերեսաց համար բարիս մաղթել։ Այն

Յակոբ, Յոսէփ և Դաւիթ առանց Աստուածի աշակերտութեան ուսան այս գաղտակ Մարգարէք, Առաքեալք Մարտիրոսք, Հայրապետք, այս գաղտին մէջ քաջամարտ հանդիսացան։ Որչափ բարձր ու վսեմ է այն առաքինութեան նպատակ. անկոտոր մարդ՝ Աստուծոյ կատարելութեան կը վերածէ, աշխարհիս որդիքներ՝ երկնաւոր հօր որդիքներ կը դրէ. որ իւր արև և անձրև բարեաց և չարեաց, արդարոց և մեղաւորաց վրայ հաւասար կը բաշխէ։

Աշխարհ իւր սիրելին կը սիրէ, աշխարհ իւր բարեկամաց միայն ողջոյն կուտայ. Աստուած իւր ընտիր զաւակներ կորոշէ և կը զատէ աշխարհիս տարբերական հանդարտներէն ու կեղծաւոր վարմունքէն և կառաջնորդէ զանոնք կատարելագոյն հանդարտն. երկնաւոր Հօր կատարելութեան նմանութիւն՝ հարազատ որդիքներէն կը պահանջէ։ Այն մարդ մանկանացու և ապիկար իւր փոքրիկ անձին չափաւորութեամբ միայն կարող է առաքինանալ. թող չի ձգտի յանդգնութեամբ Հօր Աստու-

ծոյ անհասանելի կատարելութեան հաստատել։ Ինչ՞ հաստատութիւն ունի կաթիլ մի ջուր՝ անսահման ովկիանոսին հետ, նշոյլ մի լոյս՝ արեւուն հետ, նուաստ արարած մի՝ իւր Արարչին հետ։ Մարդոյն կատարելութիւն միայն իւր ուժին և դրուած պատուիրանների չափով է. երանի թէ նոյն չափով բաղձայինք առաքինանալ, բա և շատ էր։



# Զ. ԳԼԽՈՅՆ ՎԵՐԱՅ

ԶԳՈՅՇ լերան գագաթն թեան ձերամբ՝ մի ստնել առաջի մարդկանն. որպէս թէ ի ցոյց ինչ նոցա ի նային։

Ցիսուս Վոմիսի օրինաց թեերի մնացած գաղտնի՝ իւր Աստուածեղ բարձրագոյն դասերով լրացոյց. այս վերջերորդ գլխոյն մէջ կոկոխ զգուշութեան նոր դասեր ստանել. որով կը գտատեսուակէ իւր նորընծայ աշակերտաց ու միանգամայն բոլոր հաւատացեալներն. որպէս զի չի նեմանին գայրաց ու փարիսեցոց. որոց ամէն գործքեր արտաքին կերպարանքեամբ խառնուած էր. աղօթեսիթեն, պահք և ողորմութիւն, միայն խարէութեան միջոց մի էր Վրուսալէմի հրապարակին մէջ, բազմութեան ժողովրդոց առաջ փող հարկանելով, աղքատներ հրատիրելով ի տես աշխարհի

ապրանքեմեան նոքոք կը բաշխէին։ Ինչ՞
էր նոցա մտաց գաղտնի նպատակ, ոչինչ
բան չէր, այլ թէ մարդիկներ տեսանեն և
գովաբանեսցեն նոցա հոյակերպ փառասիրեն գի-
բրեն։ Այս մարդասէր կեղծաւորներն երկ-
նաւոր Հօրէն վարձք մի չէին յուսար, բա-
ւական կը համարէին մարդոց առաջ գո-
վաբանեալ և փառք։ Դուք, կամ Ցիսուս
ասացէք փարիսեցոց կեղծաւոր կերպա-
րէն։ այնչափ զգուշութեամբ ու ժամուկ
տուէք ձեր ողորմութիւն կատարելոյ ամենեն,
մինչև աջ ձեռքն տուած՝ ձախ ձեռք չիմա-
նայ։ վասն զի երբոք, մի կասկածիք,
Աստուած հատուցիչ է։ Դա երբ ժամուկ
կը տեսնայ ձեր տրոց նոքոք՝ յայտնապէս
ի տես աշխարհի կը վճարէ վարձք։ ասոր
համար չէ, որ տեսնող մարդիկ իրրև վկայ
կացուցանէք ձեր տարբերութիւնս։

Ցիսուս ապաքի ապաշաւորոյն զանա՝
նոյնպէս ամենայն զգուշութեամբ կատա-
ղէ, որ կեղծաւորաց նման հրապարակնե-
րու առկիւններ շշնջիւն ձայնով չարաքնե-
մարդկանց առաջ իրրև գերեսանոց Աս-

